Դանիել Վարուժան

Ո՛ Տալիթա

Կարմրաշառայլ լույսերուն մեջ կը վառի
Կապելադ, ո՛ Տալիթա:
Բե՛ր գարեջուրն, և թող փրփուրն հոսանուտ
Մատերդ ի վար պըղպըջա:

Ի՛նչ փույթ թե ես ազնըվական կը թվիմ,
Ունիմ ձեռքեր քընքշենի.
Եվ ի՛նչ փույթ թե դուն աղջիկ մ'ես ջըլեբաց՝
Որ բանվորներ կ'ընդունի:

Կ'ատեմ կիներն՝ որոնք դիմացն հայլիին
Դիմաներկեր կը շաղվեն.
Կը ծըցընեն Ծերակույտի անդամներ
Տըռփանքներով տարորեն:

Դահլիճներուն փարթամ կիները կ'ատեմ.
Իրենց կավատն է՝ ոսկին.
Ձիրենք սիրողը կը սպառեն, և իրենք
Տան շընիկեն կը սպառին:

Բե՛ր, Տալիթա՛, բե՛ր գարեջուրն, ու նըստե
Ծունկիս վրա՝ թույլ տալով
Որ աղախնի կարճ քըղանցքեդ երևնան

Բումբերը՝ սև գուլպայով:

Թող ճրագներդ հյուծին մինչև առավոտ,
Եվ թող շեմին վրա երգե
Գինով աշուղն՝ հառած բիբերը մեզի,
Բիբերը զուրկ կրակե:

Թող մազերուդ ոսկի հյուսկերը քակես
Գավաթին մեջ բյուրեղյա,
Եվ ծունկերես վար սրրունքներդ օրորես՝
Մինչև որ սերս հասուննա:

Ինծի ի՛նչ փույթ թե շրթունքներդ են խածեր
Նավաստիները կոպիտ,
Եվ հոսեր են քրտինքն իրենց տրոփանքին
Աչքերուդ մեջ՝ ու ծոցիդ:

Այսօ կ'ուզեմ կուրծքիդ վրրա գինովնալ
Ինչպես գինվոր մը արբուն.
Կ'ուզեմ պարպել գավաթդ, և դուն ալ պարպես
Սիրտրս՝ նուռի պես հասուն:

Այսօր կ'ուզեմ դահլիճին մեջ ծաղրրված
Սերրս առջևրդ պղծել,
Խաբված հոգիս բերել ռամիկ աղջրկան
Գարեջուրով մը ծախել: